

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ՀԱՅ ՆՈՐ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Նոյեմբերի 27-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարի դարավոր կամարների տակ հանդիսավոր պատարագ մատուցվեց Խորհրդային Հայաստանի 68-րդ տարեդարձի առթիվ: Տոն հայ պետականության՝ դարեր տևած անիշխանական կացնից հետո: Տոն ժողովրդի ինքնահաստատման՝ ի հեճուկս պատմության ու ճակատագրի հարվածների: Տոն գալիքի երաշխիքի՝ այսօրվա պետականությունը վաղվա երազների հիմք դարձնելու հույսի:

Խուռներամ բազմությունը լցրել էր եկեղեցին՝ ադրբեջանական հանրապետությունում գտնվող հայության վիճակով մտահոգ, փախստականներին զգալության հույսով՝ լսելու Ամենայն Հայոց Հայրապետի պատգամը:

Եվ Նորին Սուրբ Օծությունը տվեց իր հուսադրող պատգամը՝ ողջախոհության ու լավատեսության կոչելով իր ժողովրդին, քանի որ Սուրբ Ավետարանում Քրիստոս խոստացել էր, որ բոլոր նրանք, ովքեր արդարության քաղց ու ծարավ ունեն, պիտի հագենան, այսինքն պիտի հաղթանակի արդարությունը, և մեր ժողովրդի պատմության նոր հարցադրումները պիտի ստանան իրենց արդարամիտ լուծումը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ 68-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին» (Մատթ. Ե 6):

Սիրելի հավատացյալներ,

Հիսուսի լերան քարոզի այս խոսքը, դարեր շարունակ եղել է մեր տառապյալ Եկեղեցու ու ժողովրդի երազանքն ու մխիթարությունը:

Մանավանդ 10-րդ դարից հետո, գրեթե անապես մեր ազգի կյանքի բաժինը եղել է հալածվել՝ վասն արդարության և վասն ազատության:

Նա միշտ մարտնչել է իր ճակատագրի դեմ և երբեմն էլ թեև համակերպվել է դաժան պայմաններին, սակայն երբեք չի հուսահատվել: Նա հոգով միշտ մնացել է ազատ ու հավատքը չի կորցրել, որ արդարության քաղցյալները անպայման կհագենան:

Սա հայ ժողովրդի կյանքի փիլիսոփայությունն է դարձել և դրանով է ապահովվել իր ոգեկանությունը, դրանով է կազմավորվել ու թռիչք առել իր հանճարը, դրանով է նա ստեղծել իր մշակութային արժեքների փառավոր գանձարանը:

Հայ ժողովրդի դաժան ճակատագիրը սակայն շրջվեց Սարդարապատի հաղթանակով, իր քաջ որդվոց սուրբ արյունով և վերականգնվեց հայկական ազգային պետությունը, որ սասնամյակների ընթացքում ոչ միայն իր դարավոր վերքերը բուժեց, այլև կարողացավ տնտեսական, կրթական, մշակութային նոր վերելք ապրել, քառապատկելով իր ազգաբնակչության թիվը և օժտել Հայաստանը բոլորիս սարդանք Երևանով:

Սկիզբ առավ ու բարձունքների հասավ Հայաստանի վերածնունդը:

Սիրելի հավատացյալներ,

Ինչպես ամեն տարի նոյեմբերի վերջերին, մեր Մայր տաճարում հանդիսավոր գոհաբանական մաղթանքի սրարողություն ենք կատարում Սովետական Հայաստանի հիմնադրության տարեդարձի սոթիվ, աղոթելու մեր մայր հայրենիքի անսասանության և համայն մեր ժողովրդի կենաց խաղաղության ու բարօրության համար:

Այս տարվա հիշատակումը տարբերվում է նախորդ տարիների ոգեկոչումներից, իբրև բնական հետևանք Արցախ-Ղարաբաղյան տագնապալի իրավիճակի, իբրև հետևանք համայն մեր ժողովրդի արդար սպասումների, ի պաշտպանություն Ղարաբաղի ինքնավար մարզի օրինավոր պահանջների կենսագործման, ազգությունների ինքնորոշման սահմանադրական իրավունքի հիման վրա: Հայ ժողովրդի պահանջատիրական արդար շարժումը անշուշտ պիտի շարունակվի և պետք է շարունակվի, սովետական ազգությունների եղբայրության սկզբունքների հիման վրա:

Նման տագնապալի կացությունց մեջ գտնվող ժողովուրդների համար, հրամայական է պահպանել հայրենասիրական բարձր գիտակցություն, քաղաքացիական ողջամտություն և միասնության ոգի, համախմբված մեր երկրի հիմնական շահերի պատվանդանի շուրջ: Մեր ազգային տոնը, նոյեմբերի 29-ի ոգեկոչումը այն սոիթն է, որ անդրադառնանք և ուղիղ ըմբռնենք մեր հայրենիքի հիմնական շահերը:

Այսօր չենք կարող մոռանալ այն աղետալի պահը, 1920-ի աշունը, երբ քեմալական թուրքական բանակը, Քյազիմ Կարաբեքիր փաշայի հրամանատարության ներքո, հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա և գրավեց Կարսն ու Ալեքսանդրապոլը և իր կամքը պարտադրեց Ալեքսանդրապոլի սև դաշնագրով, որով Հայաստանը անձնատուր էր լինում դարավոր թշնամուն:

Ահա այդ պահին էր, որ ռուսաց բանակի օգնությամբ դուրս քշվեց թշնամին մեր երկրից ու ծնունդ առավ Սովետական Հայկական Հանրապե-

տությունը իբրև անդամ Սովետական սոցիալիստական հանրապետությունների միության:

Այսօր, երբ տոնախմբում ենք մեր Հանրապետության տարեդարձը, պետք է աղոթենք, որ նույն անվտանգության ու խաղաղ զարգացման ճանապարհով, սովետական ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքում, մեր հայրենի ժողովուրդը շարունակի գոյատևել, ապրել ու գործել կյանքի կոչելու կամեցողությամբ իր բոլոր արդար եպագանքները, մանավանդ որ վերակառուցման և ժողովրդավարական հեղուշրջման այս ժամանակներում հետզհետե զարգանում ևն ու դեռևս պիտի զարգանան՝ Սովետական Միության կառույցի մեջ, ազգային հանրապետությունների ներքին ազատ ինքնակառավարման պայմանները ու ձևերը, ազգամիջյան ուղիղ փոխըմբռնման և համերաշխ գործակցության ճանապարհով, ի բարգավաճումն բոլոր եղբայր ազգությունների ու հառավել ամրապնդում սովետական բազմազգ միության հիմքերի, ձերբազատված անցյալի աղետալի սխալներից:

Երկու տարի առաջ, 1986-ի հուլիսին, մի կարևոր առիթով Մենք արտասահմանի հայության ուշադրությանը հանձնեցինք Մեր մտածումը, Մեր դատողությունը՝ Սովետական Հայաստանի ներկայի ու ապագայի նկատմամբ, ասելով, որ «Սովետական Միության ազգային հանրապետությանց շարքում, եթե կա մի հանրապետություն, որը առավելագույն չափով շահագրգռված է անբաժան մնալ Սովետ. Միության կազմից, դա Հայաստանի Հանրապետությունն է»:

Սա մեր պատմության հրամայականն է, սա մեր ճակատագիրն է, սա մեր ապագան է:

Մեր այս դատողությունը հիմնված է երեք բախտորոշ տվյալների վրա. առաջին՝ մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը, երկրորդ՝ մեր անցյալի ողբերգական փորձառությունը և երրորդ՝ մեր ժողովրդի սեփական ուժերի ու հնարավորությունների տարողությունը:

Այս խոհերը Մեր գիտակցության մեջ առավել հստակվեցին ու ամրապնդվեցին վերջին ամիսներին և այս օրերին: Եվ Մեզ համար մխիթարություն է, որ Մեր վերոհիշյալ դատողությունը պատգամ հանդիսացավ նաև սփյուռքի հայության ծոցում, բոլոր հայ կազմակերպությանց հոսանքների հաստատ կեցվածքով, նույն պատվանդանի վրա:

Այո, հրամայական է, այդ պատվանդանի վրա կանգնած մնալ ամուր ու աներեր, թե՛ մայր երկրում, թե՛ արտասահմանում և աննահանջ կերպով հետապնդել կենսագործումը մեր ազգային բոլոր արդար սպասումների ու իրավունքների, թե՛ Արցախ-Ղարաբաղյան հարցում, թե՛ 1915-ի ցեղասպանությունը միջազգային մակարդակի վրա ճանաչում ստանալու հարցում, թե՛ հայրենիք-սփյուռք միասնական գործակցության հարցում, թե՛ մեր երկրում մայրենի լեզուն առավել ամրապնդելու և համատարած օգտագործման մեջ դնելու հարցում, թե՛ մեր դեռևս ավերակ մնացած վանքերն ու եկեղեցիները առավել թափով վերաշինելու և նրանցից մի քանիսը գործող դարձնելու հարցում, թե՛ անցյալի տնտեսական, սոցիալական ու բարոյական արատները արմատախիլ անելու հարցում, ամբողջ Սովետական Միության մեջ ծավալվող վերակառուցման բարեբաստիկ շարժման ճանապարհով, թե մոտիկ անցյալի հայ ազգային ազատագրական շարժման դեպքերն ու հերոսական սխրանքները վերագնահատելու հարցում:

Եթե չլիներ նոյեմբերի 29-ը և եթե կյանքի կոչվեր Հայաստանին պար-

տարված Ալեքսանդրապոլի սև դաշնագիրը, պիտի կորցնեինք այն, ինչ շահել էր մեր ժողովուրդը Սարդարապատի հաղթանակով:

Մեր ըմբռնումով, 1918-ի մայիսի 28-ի ակտը և 1920-ի նոյեմբերի 29-ի հռչակումը, երկու պատմական իրագործումներ են, մեկը մյուսին հաջորդող, մեկը մյուսին ամբողջացնող, երկուսն էլ նույն ազգային իդեալների իրականացման նույն ճանապարհի վրա:

Ինչքան ժամանակը առաջ է գնում, այնքան իրար են մոտենում այդ երկու բախտորոշ տարեթվերն ու իրար իմաստավորում:

Այս մտորումներով ու հույզերով, սիրելի հավատացյալ ժողովուրդ Մեր, այսօր ես դեպի երկինք ենք առաքում Մեր աղոթքը, որը կարդացվում է բոլոր հայ եկեղեցիներում ամեն կիրակի օր սուրբ պատարագի ընթացքում «Տէր Աստուած, զհանրապետութիւն Հայաստան աշխարհիս և զհամայն ժողովուրդս հայոց պահեա պահպանեա յամայր ամս ընդ հովանեաւ ամենազօր Աջոյ Քոյ, ի շինութեան, ի խաղաղութեան և յանսասանութեան»: Ամեն:

ՎԵՀԱՓԱՌ ՀՅՈՒՍԻՍՏՐ ՏԻՍՐՔ Ն. ՌԻԺԿՈՎԻ, Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ
Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆԻ ԼՈՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆՑ ՍՐԱՀՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԽՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. ՌԻԺԿՈՎԻ
ԵՎ ՀԽՍՀ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ

(14 դեկտեմբերի 1988 թ.)

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԻՏԱԼԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՖԱՆՖԱՆԻԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

ԵՐԿՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱԳ ԽՈՐԱՆԻ ՎՐԱ
(18 դեկտեմբերի 1988 թ.)

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՐԳՈՒՐԱՆՔ. ԼԵՆԻՆԱԿԱՆ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄՆ-Ի ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐԴՈՒ ԵՎ ԹՈՌԱՆ ՀԵՏ

ԿԻՍԱՎԵՐ ԱՄԵՆԱՓՐԿԻՉԸ. ԼԵՆԻՆԱԿԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՓՐԿԱՐԱՐՆԵՐԻ ԽՄԲԻ ՀԵՏ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ

(21 հունվար, 1989)



ԼԵՆԻՆԱԿԱՆ



ՍՊԻՏԱԿ